

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ  
2011-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

**I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1. Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) ոլորտի զարգացման թիրախային նպատակակետերի, դրանց ձեռքբերմանն ուղղված միջոցառումների և այդ միջոցառումների իրականացման արդյունավետության գնահատման չափորոշիչների վերաբերյալ դրույթների ամբողջություն է: Ծրագիրը մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մայիսի 27-ի նիստի N 20 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարության» հիմնադրույթներին համապատասխան:

**II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ**

2. Ծրագրի նպատակը ՀՀ գիտության ոլորտի հետագա զարգացման ապահովումն է՝ ՀՀ կառավարության, մասնավոր բիզնեսի, քաղաքացիական հասարակության ինստիտուտների և սփյուռքի ջանքերի զուգակցմամբ:

3. Ծրագրի իրականացման հիմնական թիրախներն են՝

1) գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտի կառավարման ու աշխատանքների կազմակերպման համակարգի կատարելագործումը, ոլորտի կայուն զարգացման պայմանների ստեղծումը.

2) գիտության, կրթության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող երիտասարդ կադրերի թվաքանակի աճի ապահովումը, գիտության ոլորտի ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի արդիականացումը.

3) հիմնարար և կիրառական բնույթի՝ ներառյալ տնտեսության մեջ օգտագործվող գիտելիքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանումը.

4) կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի ներդաշնակ համակարգի ձևավորման նախադրյալների ստեղծումը.

5) հայագիտության ոլորտի առաջնային զարգացումը.

6) միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցության զարգացումը:

### III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ


**4. Թիրախ 1: Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտի կառավարման ու աշխատանքների կազմակերպման համակարգի կատարելագործում, ոլորտի կայուն զարգացման պայմանների ստեղծում.**

1) ներկա վիճակը.

ա. գիտության ոլորտում պետական քաղաքականության հիմնական սկզբունքները ձևակերպվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից 2000թ. դեկտեմբերի 5-ին ընդունված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2010թ. մայիսի 27-ի նիստի N 20 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունում».

բ. ՀՀ 2010թ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական ծրագրերը և թեմաները կատարվում էին 115 գիտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ բուհ), որոնք ներկայացնում են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), 11 նախարարություն, Քաղաքացիական ծառայության խորհուրդը, Երևանի քաղաքապետարանը և ընդհանուր թվով 19 այլ կազմակերպություն՝ 2 ՊՈԱԿ, 1 ԲԲԸ, 3 ՓԲԸ, 10 ՍՊԸ և 3 ՀԿ: Այդ 115 կազմակերպություններից 66-ը ՊՈԱԿ է, 30-ը՝ ՓԲԸ, 11-ը՝ ՍՊԸ, 1-ը՝ ՊՓԲԸ, 4-ը՝ ԲԲԸ և 3-ը՝ ՀԿ: 2 պայմանագրային (թեմատիկ) թեմա կատարվում էին անհատ կատարողների կողմից.

գ. 2008-2010թթ. ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառին հատկացված ֆինանսական ծավալները կազմել են ՀՆԱ-ի 0.19, 0.27 և 0.24 տոկոսը, ինչը զգալիորեն զիջում է զարգացած կամ զարգացող մի շարք երկրների ցուցանիշներին: Մասնավորապես, ըստ «Եվրոստատի» տվյալների, 2008թ. հետազոտությունների և մշակումների համախառն ներքին ծախսերը Եվրոմիության 27 պետություններում միջինը կազմել են ՀՆԱ-ի 1.77 տոկոս, Բալթյան պետություններում՝ 0.6-1.3, Ռուսաստանի Դաշնությունում՝ 1, իսկ ամենաբարձրը եղել է Իսրայելում՝ 4.9 տոկոս (տե՛ս Գծապատկեր 1): Միևնույն ժամանակ ի տարբերություն զարգացած կամ զարգացող



Գծապատկեր 1. 2008թ. հանրապետությունում և մի շարք օտարերկրյա պետություններում հետազոտությունների և մշակումների համախառն ներքին ծախսերը որպես ՀՆԱ-ի տոկոս՝ ըստ «Եվրոստատի» ու Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության տվյալների: Կրաստանի, Իրանի և Ադրբեջանի դեպքում տվյալները բերված են համապատասխանաբար 2005թ., 2006թ. և 2007թ. համար:

մի շարք երկրների՝ ՀՀ գիտության ոլորտի բյուջեի ներքին կառուցվածքում չնչին է տնտեսության մասնավոր հատվածի մասնակցությունը. գիտական կազմակերպությունների արտաբյուջետային միջոցները հիմնականում ձևավորվում են միջազգային դրամաշնորհների և նվիրատվությունների հաշվին.

2) առկա հիմնական խնդիրները.

ա. գիտության ոլորտը կանոնակարգող իրավական ակտերը, այդ թվում՝ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը, գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման կարգերը, ինչպես նաև գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմները չեն համապատասխանում արդի ժամանակների պահանջներին.

բ. գիտության ոլորտի կազմակերպման և կառավարման գերատեսչական տարանջատվածության պայմաններում հստակեցված չեն պետական մարմիններինների դերն ու պատասխանատվությունը գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում պետական միասնական քաղաքականության մշակման ու իրականացման, պետական պատվերի ձևավորման ու տեղադրման, գիտական արդյունքի առևտրայնացման մեխանիզմների ստեղծման ու ներդրման հարցերում.

գ. գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում դանդաղ են իրականացվում կառուցվածքային բարեփոխումները, գիտական կազմակերպություններում ներդրված չի աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման ժամանակակից համակարգը.

դ. բացակայում է գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման ժամանակակից համակարգը.

ե. ցածր է պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառին հատկացվող ֆինանսական ծավալների մակարդակը, անբավարար է ոլորտի բյուջեի ներքին կառուցվածքում տնտեսության մասնավոր հատվածի մասնակցության աստիճանը, և բացակայում են այդ մասնակցությունը խթանող բարենպաստ ներդրումային պայմաններն ու մեխանիզմները.

### 3) առկա խնդիրների հիմնական լուծումները.

ա. գիտության ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի, այդ թվում՝ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի համապատասխանեցում ներկա իրավիճակին, գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման նոր կարգերի ընդունում, գիտական անկախ փորձագիտական համակարգի ներդրում, համակարգի աշխատանքի իրավական, կազմակերպչական և ֆինանսական հիմքերի ապահովում՝ մասնավորապես,

«Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի ընդունում.

բ. պետական մարմինների դերի և պատասխանատվության հստակեցում՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում պետական միասնական քաղաքականության մշակման և իրականացման հարցերում: Մասնավորապես անհրաժեշտ է գիտության ոլորտում կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական մարմինն վերապահել պետական բյուջեի ֆինանսական միջոցների օգտագործման և գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման լիազորությունները՝ անկախ դրանց գերատեսչական պատկանելիությունից՝ բուհական, ակադեմիական կամ ճյուղային.

գ. գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի օպտիմալացում և կառուցվածքային բարեփոխումների իրականացում՝ անհրաժեշտության դեպքում անկախ գերատեսչական պատկանելության միավորելով միևնույն գիտական ուղղության պետական գիտական կազմակերպությունները: Գիտական կազմակերպություններում պետք է ներդնել աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման ժամանակակից համակարգ, հստակեցնել տնօրենի և գիտական խորհրդի իրավասություններն ու պարտականությունները (արժևորելով տնօրենի պաշտոնը և վարչական ազդեցությունից հանելով գիտական որոշումների ընդունման գործառույթները), սահմանափակել գիտական ստորաբաժանումների ղեկավարների և տնօրենի պաշտոններն անընդմեջ զբաղեցնելու ժամանակահատվածը (երկու անգամ չորս տարի), ապահովել առանձին ֆինանսատնտեսական և կազմակերպչական ինքնուրույնություն ունեցող ստորաբաժանումների գործունեությունը: Անհրաժեշտ է նաև հստակեցնել բուհերում գիտական ստորաբաժանումների կազմակերպահրավական կարգավիճակը՝ ապահովելով ֆինանսատնտեսական գործունեության որոշակի ինքնուրույնություն և խրախուսելով բուհերի մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորմանը (համաֆինանսավորման սկզբունքով ծրագրերի իրականացում, համատեղ լաբորատորիաների ստեղծում և այլն).

դ. գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման ժամանակակից մեխանիզմների մշակում և ներդրում՝ ապահովելով գիտական կազմակերպությունների պետական ֆինանսավորման ծավալների ուղղակի կախվածությունը ստացվող արդյունքներով և ներդնելով բարձր արդյունավետությամբ աշխատող գիտական կազմակերպությունների խրախուսման մեխանիզմներ.

ե. պետական բյուջեից և տնտեսության մասնավոր հատվածից գիտության ոլորտին հատկացվող ֆինանսական ծավալների ավելացում:

**5. Թիրախ 2: Գիտության, կրթության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող երիտասարդ կադրերի թվաքանակի աճի ապահովում, գիտության ոլորտի ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի արդիականացում.**

1) ներկա վիճակը.


ա. 2000-2009թթ. ընթացքում հանրապետությունում գիտական աստիճանի վկայագիր են ստացել 4567 հոգի, որոնցից 452-ը՝ գիտության դոկտորի և 4075-ը՝ գիտության թեկնածուի: Դրանցից 1247-ը (258 գիտության դոկտոր և 989 գիտության թեկնածու) կամ 27.3 տոկոսն ընդգրկված է 2010թ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական ծրագրերում և թեմաներում (հուլիսի 1-ի դրությամբ).

բ. 2010թ. հուլիսի 1-ի դրությամբ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցողների թվաքանակը 3127 է, որոնցից 720 -ը ունեն գիտության դոկտորի գիտական աստիճան, իսկ 2407-ը՝ գիտության թեկնածուի: Այդ ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցողների միջին տարիքը կազմում է 56 տ.՝ գիտությունների թեկնածուներինը՝ 52 տ., դոկտորներինը՝ 66 տ.: Ընդ որում, զգալի է միջին սերնդի պակասը՝ 27-35 տարեկանները կազմում են ընդհանուրի 15 տոկոսը, 36-50 տարեկանները՝ 16 տոկոսը, իսկ 60 և բարձր տարիք ունեցողները՝ 47 տոկոսը (տե՛ս Գծապատկեր 2): Նմանատիպ պատկեր է նաև գիտական կազմակերպությունների ճարտարագիտատեխնիկական անձնակազմի համար. եթե

մինչև 35 տարեկանները կազմում են ընդհանուրի 40 տոկոսը, ապա 36-55 տարեկանները՝ 24 տոկոսը, իսկ 60 և բարձր տարիք ունեցողները՝ 28 տոկոսը:

գ. գիտական սարքավորումների բացարձակ մեծամասնությունը հնացած է՝ ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության մեջ ընդգրկված պետական գիտական կազմակերպությունների և բուհերի անձնագրավորման տվյալների, գիտական սարքերի և սարքավորումների շուրջ 70 տոկոսը հնացած է՝ դրանք ավելի քան 5 տարվա վաղեմության են.

դ. գիտական և գիտատեխնիկական գործունեության արդի գիտատեղեկատվական համակարգի ձևավորման նպատակով սեղծվել է Հայկական ազգային ԳՐԻԴ միջավայրը, պետական բյուջեից հատկացումներ են կատարվում գիտության ոլորտում տեղեկատվական ցանցերի պահպանման և զարգացման համար, կնքվել է պայմանագիր ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և «Springer Science and Media BV» ընկերության միջև՝ «Springer» ինֆորմացիոն համակարգի լիցենզիայի տրամադրման մասին.



Գծապատկեր 2. Պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցողների տարիքային բաշխումը 2010թ. հուլիսի 1-ի դրությամբ:

ե. 2011թ. հունվարի 1-ի դրությամբ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի հանրապետական պարբերական գիտական հրատարակությունների ցանկն ընդգրկում է 68 անվանում:

Ցանկի գիտական պարբերականներից միայն չորսն են ընդգրկված «Թոմսոն Ռոյթերս» գործակալության «Journal citation reports for 2009»-ում (հրատարակության տարեթիվ՝ 2010թ.)՝ «Աստղաֆիզիկա» (Astrophysics), «Նեյրոքիմիա» (Neurochemical Journal), «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր, Ֆիզիկա» (Journal of Contemporary Physics-Armenian Academy of Sciences) և «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր, Մաթեմատիկա» (Journal of Contemporary Mathematical Analysis-Armenian Academy of Sciences): Այդ չորս ամսագրերից միայն երկուսն ունեն այսպես կոչված «ազդեցության գործակից»՝ «Աստղաֆիզիկան» և «Նեյրոքիմիան»՝ համապատասխանաբար 0.486 և 0.064 (2009թ. համար), իսկ մյուս երկուսի համար դեռևս չի լրացել «ազդեցության գործակիցը» որոշելու համար անհրաժեշտ վիճակագրական տվյալների կուտակման ժամանակահատվածը: Նշված գիտական պարբերականներից հանրապետությունում հրատարակվում են երեքը՝ «Աստղաֆիզիկա», «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր, Ֆիզիկա» և «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր, Մաթեմատիկա» ամսագրերը, իսկ «Նեյրոքիմիան» ՀՀ ԳԱԱ և Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի համատեղ ամսագիր է և հրատարակվում է Մոսկվայում:

2) առկա հիմնական խնդիրները.

ա. գիտական կադրերի պատրաստման պետական պատվերի ձևավորումը կատարվում է տարերայնորեն՝ չունի լուրջ գիտական հիմնավորում և հաշվի չի առնվում պահանջարկ-առաջարկ կապը: Ասպիրանտական ուսուցումը բովանդակային առումով չի համապատասխանում միջազգային չափանիշներին.

բ. շարունակվում է բարձր որակավորում ունեցող կադրերի արտահոսքը գիտության ոլորտից: Բացակայում է երիտասարդ կադրերի ներգրավման և հաստատման պետական նպատակային քաղաքականությունը.

գ. գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի նյութատեխնիկական բազան և ենթակառուցվածքները չեն համապատասխանում ժամանակակից գիտության պահանջներին.

դ. անբավարար մակարդակի վրա է հետազոտությունների գիտատեղեկատվական հենքը, բացակայում է ներհանրապետական գիտատեղեկատվական միասնական համակարգը՝ ներառյալ էլեկտրոնային գրադարանների ցանցը: Գիտահրատարակչական գործունեությունը չի բավարարում



միջազգային չափանիշներին, բարձր վարկանիշ ունեցող միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում փոքր թիվ են կազմում հանրապետական գիտական պարբերականները.

3) առկա խնդիրների հիմնական լուծումները.

ա. գիտական կադրերի պատրաստման պետական պատվերի ձևավորման մեխանիզմի մշակում և ներդրում: Գիտական և ընդհանրապես բարձր մասնագիտական որակավորում ունեցող կադրերի պատրաստման նոր եղանակների կիրառում, մասնավորապես՝ հետազոտական համալսարանների ստեղծում: Զուգահեռաբար հարկավոր է իրականացնել միջոցառումներ՝ ուղղված ասպիրանտական ուսուցման բովանդակային բարեփոխումներին ու ատենախոսությունների գիտական մակարդակի բարձրացմանը: Պետք է անցում կատարել ասպիրանտուրայում ուսուցման քառամյա (առկա) և հնգամյա (հեռակա) ժամկետների ու ներդնել եվրոպական գիտակրթական չափանիշներին համադրելի գիտական աստիճանաշնորհման ժամանակակից համակարգ.

բ. գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման և հաստատման ծրագրի մշակում և ներդրում: Պետք է իրականացնել երիտասարդ գիտական աշխատողների աջակցության դրամաշնորհային ծրագրեր, երիտասարդ գիտնականների սոցիալական պայմանների բարելավմանն ուղղված միջոցառումներ: Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի հաստատման համար կարևորագույն նշանակություն ունի գիտական աշխատողի կարիերայի գրավչության մակարդակի բարձրացումը, որի համար հարկավոր է մշակել և ներդնել բարձր արդյունավետությամբ աշխատող գիտական աշխատողների խրախուսման մեխանիզմներ, բարելավել գիտական աշխատողների աշխատանքային ու սոցիալական պայմանները: Բացի այդ անհրաժեշտ է ձևավորել գիտական աշխատողի մասնագիտական կարիերայի հստակ մեխանիզմ՝ ասպիրանտուրա, հետդոկտորանտուրա, ժամանակավոր աշխատանք, մշտական աշխատանք և խորհրդատվական աշխատանքի իրավունք՝ կենսաթոշակի անցնելուց հետո.

գ. գիտության ոլորտի առկա ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի տեխնիկական վիճակի գնահատում, դրանց արդիականացման ծրագրի մշակում և իրականացում: Անհրաժեշտ է գնահատել առկա ենթակառուցվածքների և

նյութատեխնիկական բազայի տեխնիկական վիճակը, ստեղծել համապատասխան տվյալների շտեմարան, ինչը հնարավորություն կտա բարձրացնելու դրանց շահագործման արդյունավետությունը, օպտիմալացնելու պահպանման ու զարգացման համար հատկացվող ֆինանսական ծախսերը: Արդի վիճակի և հետազոտությունների հեռանկարների վերլուծության հիման վրա պետք է մշակել ու իրականացնել ենթակառուցվածքների արդիականացման, որոշ դեպքերում նաև նորերի ստեղծման, հետազոտական սարքավորումների համատեղ օգտագործման կենտրոնների ձևավորման ծրագրեր.

դ. ներհանրապետական միասնական գիտատեղեկատվական ցանցի ստեղծում, միջազգային գիտատեղեկատվական ցանցն ազատորեն օգտագործելու պայմանների ապահովում: Զուգահեռաբար պետք է իրականացնել նաև միջոցառումներ՝ ուղղված ինչպես հանրապետական գիտական ամսագրերի մասնագիտական մակարդակի բարձրացմանը, այնպես էլ դրանց ընդգրկմանը միջազգային առաջատար գիտատեղեկատվական շտեմարաններում: Մասնավորապես, հարկավոր է հանրապետական ամսագրերի խմբագրական խորհուրդները համալրել բարձր վարկանիշ ունեցող գիտնականներով, ավելացնել անգլերեն լեզվով հրատարակվող ամսագրերի քանակը, խրախուսել դրանցում հրապարակումները, կնքել համապատասխան համաձայնագրեր միջազգային առաջատար գիտատեղեկատվական շտեմարաններում հանրապետական գիտական պարբերականների ընդգրկման վերաբերյալ և այլն:


### **6. Թիրախ 3: Հիմնարար և կիրառական բնույթի՝ ներառյալ տնտեսության մեջ օգտագործվող գիտելիքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանում.**

1) ներկա վիճակը.

ա. 2010թ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվել են գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման 158 ծրագրեր (որոնցում ընդգրկված են նաև հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունները), ինչպես նաև ազգային

արժեք ներկայացնող օբյեկտների պահպանության 3, պետական-նպատակային 6 ծրագրեր և պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման 710 թեմա.

բ. ըստ պետական գիտական ծրագրերի և թեմաների հաշվետվությունների, հանրապետության գիտնականների հեղինակությամբ կամ համահեղինակությամբ գրախոսվող ամսագրերում 2009թ. հրատարակվել է շուրջ 3900 գիտական աշխատություն: 2008-2010թթ. ընթացքում «Սկոպուս» գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված ամսագրերում հրատարակվել է 1615 գիտական հոդված՝ 514, 558 և 543 հոդված՝ համապատասխանաբար 2008թ., 2009թ. և 2010թ. համար (պատկանելիության որոնումը՝ Հայաստան, տե՛ս Գծապատկեր 3).



Գծապատկեր 3. 2000-2010թթ. ընթացքում հանրապետության գիտնականների հեղինակությամբ կամ համահեղինակությամբ հրատարակված և «Սկոպուս» գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված գիտական հոդվածների թվաքանակն ըստ տարիների:

գ. ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության մեջ ընդգրկված պետական գիտական կազմակերպությունների և բուհերի անձնագրավորման տվյալների, կիրառական բնույթի հետազոտությունների իրականացման համար 2008-2009թթ. ընթացքում օգտագործվել է գիտական կազմակերպությունների տարեկան ընդհանուր ֆինանսավորման մոտ 15 տոկոսը: 2010թ. ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից ազգային հայտատուներին տրված գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների արտոնագրերը (այսուհետ՝ արտոնագրեր) եղել են համապատասխանաբար 115, 41 և 10: Նույն տարվա ընթացքում Միացյալ


ազգերի կազմակերպության Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ՄՍՀԿ), Եվրոպական արտոնագրային գրասենյակի (այսուհետ՝ ԵԱԳ) և Ամերիկայի Միացյալ Նահանգների Արտոնագրային և ապրանքանիշային գրասենյակում (այսուհետ՝ ԱՄՆ ԱԱԳ) գրանցված արտոնագրերի քանակը եղել է համապատասխանաբար 4, 1 և 4 (ըստ «Սկոպուսի» տվյալների, տե՛ս Աղյուսակ 1)։

Արտոնագրերի քանակը											
Քանակ \ տարեթիվ	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
ՀՀ մտավոր սեփականության գործակալության արտոնագրեր	104	182	157	161	159	159	244	179	137	187	166
ՄՍՀԿ, ԵԱԳ և ԱՄՆ ԱԱԳ արտոնագրեր	11	11	29	20	9	10	22	24	20	10	9

Աղյուսակ 1: 2000-2010թթ. ընթացքում ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից ազգային հայտատուներին տրված և հանրապետության մասնագետների հեղինակությամբ ՄՍՀԿ, ԵԱԳ և ԱՄՆ ԱԱԳ գրանցված արտոնագրերի քանակն ըստ տարիների:

դ. հիմնարար գիտական հետազոտությունների մի շարք ուղղություններ, ինչպիսիք են օրինակ՝ ֆիզիկայի բնագավառում բարձր էներգիաների և տարրական մասնիկների ֆիզիկան, աստղաֆիզիկան, լազերային ֆիզիկան, քիմիայի բնագավառում օրգանական քիմիան, կառուցվածքային քիմիան, քվանտային քիմիան, կենսաբանության բնագավառում միկրոկենսաբանությունը, կենսատեխնոլոգիան, բիոքիմիան, մոլեկուլային գենետիկան, մոլեկուլային կենսաբանությունը կարողացել են պահպանել գիտական ներուժը, նյութատեխնիկական բազան ու ենթակառուցվածքները, միջազգային ասպարեզում ունեցած բարձր դիրքերը: Արդյունքում՝ նշված բնագավառներում և՛ հանրապետությունում են իրականացվում միջազգային մակարդակին համապատասխանող գիտահետազոտական աշխատանքներ, և՛ հանրապետության գիտական կազմակերպություններն ու բուհերը մասնակցում են առաջատար միջազգային համագործակցությունների ծրագրերի իրականացմանը: Օրինակ, 2000-

2010թթ. ընթացքում հանրապետության գիտանականների հեղինակությամբ կամ համահեղինակությամբ հրատարակված և «Սկոպուս» գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված գիտական աշխատություններն ըստ հետազոտությունների բնագավառի դասակարգելիս ֆիզիկան, աստղագիտությունը, կենսաբանությունն և քիմիան միասին կազմում են ընդհանուրի շուրջ 64 տոկոսը՝ ֆիզիկա և աստղագիտություն՝ 39, կենսաբանություն՝ 14, քիմիա՝ 11 տոկոս (տե՛ս Գծապատկեր 4)։



Գծապատկեր 4. 2000-2010թթ. ընթացքում հանրապետության գիտանականների հեղինակությամբ կամ համահեղինակությամբ հրատարակված և «Սկոպուս» գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված գիտական հոդվածների դասակարգումն ըստ հետազոտության բնագավառների:

ե. ՀՀ կառավարության 2010թ. մայիսի 27-ի N 640-Ն որոշմամբ սահմանվել են հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման 2011-2014 թվականների գերակայությունները՝ 1) հայագիտություն, հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտություններ, 2) գիտություններ կյանքի մասին, 3) վերականգնողական էներգետիկա, էներգիայի նոր աղբյուրներ, 4) առաջատար տեխնոլոգիաներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, 5) տիեզերքի ուսումնասիրություն, երկրի մասին գիտություններ, խնայողական բնօգտագործում, 6) կարևորագույն կիրառական հետազոտությունները խթանող հիմնարար գիտություններ.

2) առկա հիմնական խնդիրները.

ա. անբավարար է և՛ հանրապետությունում, և՛ միջազգային համագործակցությունների շրջանակներում իրականացվող հիմնարար գիտական հետազոտությունների պետական աջակցությունը, հանրապետությունում չի իրականացվում միջազգային մակարդակին համապատասխանող որևէ մի խոշորամասշտաբ ծրագիր.

բ. անբավարար է կիրառական հետազոտությունների պետական օժանդակության մակարդակը, կիրառական հետազոտությունների ենթակառուցվածքները չեն համապատասխանում միջազգային չափանիշների.

գ. ձևավորված չէ տնտեսության մեջ գիտական հետազոտությունների և մշակումների արդյունքների ներդրման համակարգը.

3) առկա խնդիրների հիմնական լուծումները.

ա. հիմնարար հետազոտությունների խթանում ու պետական աջակցության ապահովում՝ որպես կիրառական հետազոտությունների և մշակումների հիմք: Հիմնարար հետազոտությունների աջակցությունը պետք է իրականացվի ինչպես դրամաշնորհային, այնպես էլ խոշորամասշտաբ ծրագրերի մրցութային ընտրության հիման վրա՝ ըստ հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների.

բ. կիրառական բնույթի՝ ներառյալ տնտեսության մեջ օգտագործվող գիտելիքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների պետական օժանդակության ապահովում: Անհրաժեշտ է պետական և ոչ պետական ռեսուրսները կենտրոնացնել տնտեսության առաջադրած գիտատեխնիկական խնդիրների լուծման վրա, հետազոտությունների և մշակումների բնագավառում մշակել և իրականացնել պետական ծրագրեր, ընդլայնել պետական-մասնավոր գործակցությունը, տնտեսության մասնավոր հատվածի հետ համաֆինանսավորման սկզբունքով իրականացնել ծրագրեր: Պետական ծրագրերը պետք է ուղղված լինեն տնտեսության այս կամ այն ոլորտի կոնկրետ խնդիրների լուծմանը և կազմվեն գիտության ոլորտում պետական քաղաքականությունը մշակող ու իրականացնող պետական մարմնի, ՀՀ ԳԱԱ և շահագրգիռ պետական մարմիններիների կողմից.

գ. տնտեսության մեջ գիտական հետազոտությունների և մշակումների արդյունքների ներդրման համակարգի ձևավորում, հետազոտությունների և

մշակումների ոլորտում վենչուրային կապիտալի ներգրավում. անհրաժեշտ է ստեղծել գիտաարտադրական կենտրոններ, գիտական կազմակերպություններում և բուհերում՝ բիզնես ինկուբատորներ կամ տեխնոպարկեր: Բացի այդ, հարկավոր է իրականացնել կիրառական հետազոտությունների արդյունքների ներդրման մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ, ինչպիսիք են, օրինակ՝ ոլորտի ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի արդիականացումը և համապատասխան գիտակրթական միջավայրի ձևավորումը:

#### **7. Թիրախ 4: Կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի ներդաշնակ համակարգի ձևավորման նախադրյալների ստեղծում.**

1) ներկա վիճակը.

ա. 2010թ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացված գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանմանն ու զարգացման 158 ծրագրերից 59-ը կատարվել է ՀՀ ԳԱԱ կազմակերպություններում, 74-ը բուհերում և 25-ը՝ ճյուղային նախարարությունների գիտական կազմակերպություններում: Ըստ ֆինանսավորման ծավալների, նշված ծրագրերի ընդհանուր ֆինանսական միջոցների 59.6 տոկոսը հատկացվել է ՀՀ ԳԱԱ կազմակերպություններին, 24.3 տոկոսը՝ բուհերին, 15.1 տոկոսը՝ ընդհանուր թվով 6 նախարարությունների կազմակերպություններին, 0.2 տոկոսը՝ Երևանի քաղաքապետարանի կազմակերպություններին և 0.8 տոկոսը՝ ընդհանուր թվով 2 այլ կազմակերպության.

բ. 2010թ. իրականացվել է ակադեմիական գիտական կազմակերպությունների և բուհերի համագործակցության շուրջ 50 ծրագրեր, որոնց ճնշող մեծամասնության կատարման ժամկետը 3-5 տարի է.

2) առկա հիմնական խնդիրները.

ա. խզվել է հիմնարար հետազոտություններ-կիրառական հետազոտություններ-ինովացիոն գործունեություն կապը: Ակադեմիական գիտական կազմակերպություններում և բուհերում գրեթե բացակայում են ինովացիոն ենթակառուցվածքներ, քիչ թիվ են կազմում կոնկրետ արդյունքի ձեռքբերմանն ու ներդրմանը պատրաստ կիրառական հետազոտությունները.

բ. անբավարար է ակադեմիական գիտական կազմակերպությունների և բուհերի համագործակցության ու ինտեգրման մակարդակը.

գ. ինովացիայի բնագավառում պետական քաղաքականության մշակման և իրականացման մեջ ընդգրկված չէ գիտության ոլորտում պետական քաղաքականությունը մշակող պետական մարմինը.

դ. ձևավորված չէ կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի սիներգետիկ համակարգը: Տնտեսական և հասարակական զարգացումներում նպատակների նախանշումը և ձեռքբերումը չի իրականացվում գիտական քննարկումների հիման վրա.

3) առկա խնդիրների հիմնական լուծումները.

ա. գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում կառուցվածքային բարեփոխումների ծրագրի մշակում և իրականացում, բնագավառի կազմակերպման ու կառավարման ուղղահայաց և խիստ կենտրոնացված համակարգից անցում հորիզոնական կապերով ապահովված, ոչ կայուն տարրերից բաղկացած կայուն համակարգի.

բ. գիտական կազմակերպությունների համար նպաստավոր տնտեսական միջավայրի ձևավորում, դրանց ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ընդլայնում.

գ. ակադեմիական գիտական կազմակերպությունների և բուհերի ինտեգրման ծրագրերի մշակում և իրականացում, գիտական նորամուծությունների կենտրոնների ստեղծում, այդ թվում՝ նաև պետական և ոչ պետական գիտահետազոտական կազմակերպությունների հիմքի վրա, գիտական կազմակերպությունների մի մասի վերակազմակերպում ինովացիոն կազմակերպությունների՝ զարգացած մարքեթինգային և կոմերցիոն կառույցներով.

դ. ինովացիայի բնագավառում պետական քաղաքականության մշակման և իրականացման մեջ գիտության ոլորտում պետական քաղաքականությունը մշակող մարմնի, ՀՀ ԳԱԱ ընդգրկում: Տնտեսական և հասարակական զարգացումներում նպատակների նախանշման և դրանց ձեռքբերման հաջողության գնահատման գիտական հենքի ապահովման մեխանիզմների մշակում և ներդրում:



## **8. Թիրախ 5: Հայագիտության ոլորտի առաջնային զարգացում.**

### 1) ներկա վիճակը.

ա. 2010թ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվել են հայագիտության բնագավառի հետազոտություններ գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման 15 ծրագրերի և պայմանագրային (թեմատիկ) 93 գիտական թեմաների շրջանակներում, որի արդյունքում հրատարակվել է 1022 աշխատություն՝ համապատասխանաբար 682 և 340.

բ. ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության մեջ ընդգրկված պետական գիտական կազմակերպությունների և բուհերի անձնագրավորման տվյալների, 2008-2009թթ. ընթացքում պատմագիտության, լեզվաբանության, գրականագիտության, արվեստի, փիլիսոփայության և հնագիտության բնագավառներում հրատարակվել են 1105 գիտական հոդվածներ (500-ը՝ 2008թ. և 605-ը՝ 2009թ.), որոնց բացարձակ մեծամասնությունը վերաբերվում են հայագիտության ոլորտին: Այդ հոդվածներից 854-ը հրատարակվել է հայերեն լեզվով, 179-ը՝ ռուսերեն և 72-ը՝ այլ օտար լեզուներով.

### 2) առկա հիմնական խնդիրները.

ա. բացակայում է հայագիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը, ընտրված չեն ոլորտի գերակա ուղղությունները.

բ. նկատվում է հայագիտության ոլորտի ատենախոսությունների և գիտական աշխատությունների որակական ու բովանդակային անկում.

գ. հայագիտության ոլորտի գիտական աշխատանքները հիմնականում տպագրվում են հայերեն լեզվով, շատ քիչ են օտարալեզու լսարանին հասու աշխատանքները.

դ. բացակայում է միասնական հայագիտական ցանցը, միջազգային չափանիշներին համապատասխանող գիտական հանդես.

ե. երիտասարդ կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը չի իրականացվում համակարգային ծրագրի շրջանակներում՝ հայաստանյան և օտարերկրյա պետությունների, առաջին հերթին սփյուռքի հայագետների ներգրավմամբ.

զ. համակարգված չի հայագիտության ոլորտում ներգրավված գիտական կազմակերպությունների և բուհերի աշխատանքը, ցածր է առկա մարդկային և ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը.

3) առկա խնդիրների հիմնական լուծումները.

ա. հանրապետությունում հայագիտական աշխատանքները համակարգելու, հայագիտության ասպարեզում նկատվող տեղաշարժերը ժամանակին արձանագրելու և կանոնակարգելու, նրա արդյունավետ և հեռանկարային զարգացման օրինաչափությունները նախանշելու նպատակով ՀՀ վարչապետի 2010թ. սեպտեմբերի 29-ի N 790-Ա որոշմամբ ստեղծվել է Հայագիտության հարցերով խորհուրդ, որի աշխատակարգը հաստատվել է ՀՀ վարչապետի 2010թ. նոյեմբերի 18-ի N 984-Ա որոշմամբ.

բ. ՀՀ վարչապետի 2010թ. հոկտեմբերի 27-ի N 907-Ա որոշմամբ ստեղծվել է Աշխատանքային խումբ, որին հանձնարարվել է մինչև 2011թ. մարտի 1-ը ՀՀ վարչապետին ներկայացնել հայագիտության հայեցակարգի և հայագիտության ոլորտի զարգացման ռազմավարության նախագծերը:


## **9. Թիրախ 6: Միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցության զարգացում.**

1) ներկա վիճակը.

ա. 2008-2010թթ. ընդլայնվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում միջազգային համագործակցությունը՝ ստորագրվել են համագործակցության հուշագրեր և համաձայնագրեր Ռուսաստանի Դաշնության հիմնարար հետազոտությունների հիմնադրամի, Ֆրանսիայի Հանրապետության գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի, Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի, Հիմնարար հետազոտությունների բելառուսական հիմնադրամի և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հետ.

բ. օտարերկրյա պետությունների մասնագետների հետ համատեղ կամ միջազգային համագործակցությունների շրջանակներում իրականացվող աշխատանքները կազմում են հանրապետության գիտնականների հեղինակությամբ

կամ համահեղինակությամբ հրատարակված և միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված գիտական աշխատությունների շուրջ կեսը: Այդ ցուցանիշն ըստ «Սկոպուսի» տվյալների, 2000թ. եղել է 41 տոկոս, 2010թ.՝ մոտ 51 տոկոս (տե՛ս Գծապատկեր 5).



Գծապատկեր 5. 2000-2010թթ. ընթացքում հանրապետության և օտարերկրյա պետությունների գիտնականների համահեղինակությամբ հրատարակված և «Սկոպուս» գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված գիտական հոդվածների տոկոսն ընդհանուրի մեջ՝ ըստ տարիների:

գ. սկսած 2010թ. Ֆրանսիայի Հանրապետության գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի հետ համաֆինանսավորման սկզբունքով իրականացվում են համատեղ

11 ծրագրեր, որոնցից 8-ը գիտնականների փոխանակման ծրագրեր են, 2-ը՝ միացյալ միջազգային լաբորատորիաների (մեկը՝ ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի, մյուսը՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ու ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտների մասնակցությամբ), իսկ 1-ը՝ Հարավկովկասյան երկրների համագործակցության հետազոտական խումբ է (ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի մասնակցությամբ): Սկսած 2011թ. իրականացվելու են նաև փոխգործակցության ծրագրեր Հիմնարար հետազոտությունների բելառուսական հիմնադրամի, Ռուսաստանի Դաշնության հիմնարար հետազոտությունների հիմնադրամի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ.

2) առկա հիմնական խնդիրները.

ա. մշակված չի գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում միջազգային համագործակցության զարգացման պետական միասնական ծրագիրը.

բ. գրեթե չեն իրականացվում կիրառական բնույթ ունեցող միջազգային ծրագրեր, որոնք մեծ հավանականությամբ կարող են հանգեցնել առևտրայնացման ենթակա արդյունքների: Դանդաղ է ընթանում համաֆինանսավորման սկզբունքով համատեղ միջազգային գիտական կենտրոնների, լաբորատորիաների, գիտակրթական և գիտաարտադրական կառույցների ստեղծումը.

գ. չի մշակվել միջազգային առաջատար կենտրոններում մասնագետների պատրաստման և վերապատրաստման ծրագիր.

դ. չի ձևավորվել օտարերկրյա պետություններում աշխատող հայազգի գիտնականների գիտելիքների, փորձի և հնարավորությունների օգտագործման գործուն համակարգ.

3) առկա խնդիրների հիմնական լուծումները.

ա. գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում միջազգային համագործակցության զարգացման պետական միասնական ծրագրի մշակում, որի նպատակը պետք է լինի բնագավառում միջազգային համագործակցության առաջնահերթությունների որոշումը և իրավահավասար ու փոխշահավետ գործակցության համար բարենպաստ պայմանների և մեխանիզմների (կառույցների) ստեղծումը: Ծրագրի մշակման համար հիմք է հանդիսանալու ինչպես միջազգային համագործակցության ներկա վիճակը, այպես էլ գիտության և տեխնիկայի զարգացման համաշխարհային կանխատեսումների համատեքստում հանրապետության գիտական և գիտատեխնիկական զարգացման հեռանկարների գնահատումը.

բ. հանրապետությունում առկա կամ ձևավորվող հեռանկարային ուղղությունները արտերկրի նմանօրինակ ուղղություններին ինտեգրելուն ուղղված ծրագրերի իրականացում.

գ. միջազգային կամ օտարերկրյա առաջատար կենտրոններում կադրերի պատրաստման և վերապատրաստման ծրագրի մշակում և իրականացում.

դ. օտարերկրյա պետություններում աշխատող հայազգի գիտնականների ներգրավմամբ ծրագրերի մշակում և իրականացում:

**IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ**

10. Ծրագրի իրականացման արդյունավետության գնահատման չափորոշիչներն են՝

1) հրապարակումները՝

ա. գրախոսվող ամսագրերում հրատարակված գիտական աշխատությունների ընդհանուր քանակը.

բ. միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հրատարակված գիտական աշխատությունների քանակը.

2) արտոնագրերը՝

ա. հանրապետությունում գրանցված արտոնագրերի քանակը.

բ. ՄՍՀԿ-ում գրանցված արտոնագրերի քանակը.

գ. ԵԱԳ-ում գրանցված արտոնագրերի քանակը.

դ. ԱՄՆ ԱԱԳ-ում գրանցված արտոնագրերի քանակը.

3) մշակումները և տեխնոլոգիաները՝

ա. ներդրված տեխնոլոգիաների մասն ընդհանուր մշակումների և տեխնոլոգիաների մեջ:

**V. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ**

11. Ծրագրի կատարողականի մոնիթորինգը հիմնվելու է ծրագրի իրականացման արդյունավետության պարբերական գնահատումների վրա՝ ըստ Աղյուսակ 2-ում ներկայացված գնահատման չափորոշիչների քանակական արժեքների: Մոնիթորինգն իրականացվելու է երկամյա պարբերականությամբ՝ 2013 և 2015 թվականներին:

12. Առաջին մոնիթորինգի արդյունքների հիման վրա երկրորդ մոնիթորինգի գնահատման չափորոշիչների արժեքները ենթակա են փոփոխության:

Հ/հ	Չափորոշիչ	Արժեք		
		2010թ.	2013թ.	2015թ.

<b>1.</b>	<b>Հրապարակումներ</b>				
	1.1	գրախոսվող ամսագրերում հրատարակված գիտական աշխատությունների ընդհանուր քանակը*	4000	4300	4500
	1.2	միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հրատարակված գիտական աշխատությունների քանակը**	543	700	850
<b>2.</b>	<b>Արտոնագրեր***</b>				
	2.1	ՀՀ-ում գրանցված արտոնագրերի քանակը	166	192	212
	2.2	ՄՍՀԿ-ում գրանցված արտոնագրերի քանակը	4	6	8
	2.3	ԵԱԳ-ում գրանցված արտոնագրերի քանակը	1	2	4
	2.4	ԱՄՆ ԱԱԳ-ում գրանցված արտոնագրերի քանակը	4	6	8
<b>3.</b>	<b>Մշակումներ և տեխնոլոգիաներ</b>				
	3.1	ներդրված տեխնոլոգիաների մասն ընդհանուր մշակումների և տեխնոլոգիաների մեջ (վերջին հինգ տարիների կտրվածքով)	<1%	10%	15%
<p>*) որպես հիմք ընդունվել է հանրապետության պետական գիտական կազմակերպությունների և բուհերի 2009թ. անձնագրավորման տվյալները և նախատեսվել է տարեկան 2.5 տոկոս աճ.</p> <p>**) որպես հիմք ընդունվել է «Սկոպիա» գիտատեղեկատվական շտեմարանի տվյալները և նախատեսվել է տարեկան 10 տոկոս աճ.</p> <p>***) որպես հիմք ընդունվել են 2010թ. տվյալները և նախատեսվել է տարեկան 5 և 15 տոկոս աճ համապատասխանաբար ՀՀ-ում և ՄՍՀԿ-ում ու ԱՄՆ ԱԱԳ-ում գրանցված արտոնագրերի համար և 30 տոկոս աճ՝ ԵԱԳ-ում գրանցվածների համար:</p>					

Աղյուսակ 2. Ծրագրի կատարողականի ընթացքի գնահատման չափորոշիչների քանակական արժեքները:

## VI. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԸ

13. Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներն են՝

1) ՀՀ պետական բյուջեն.

2) արտաբյուջետային միջոցները, այդ թվում՝ դրամաշնորհները, ֆիզիկական և իրավաբանական անձանց, օտարերկրյա պետությունների գիտական և (կամ) գիտակրթական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային գիտական կազմակերպությունների կողմից տրամադրվող միջոցները.

3) ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրները:

Հավելված N 2  
 ՀՀ կառավարության 2011թ.  
 հունիսի 17-ի նիստի N 23  
 արձանագրային որոշման

**ԺԱՄՆԱԿԱՑՈՒՅՑ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2011-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

Հ/հ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Ֆինանսավորման աղբյուրը	Պատասխանատու կատարողները	Կատարման ժամկետը
1	2	3	4	5	6
<b>1.</b>	<b>Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտի կառավարման ու աշխատանքների կազմակերպման համակարգի կատարելագործում, ոլորտի կայուն զարգացման պայմանների ստեղծում</b>				
1.1	Գիտության ոլորտում ՀՀ օրենսդրության կատարելագործում, այդ թվում՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման նոր կարգերի, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» նոր օրենքի և «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» օրենքի ընդունում	Գիտության ոլորտի գործառույթների ճշգրտում և հստակեցում, ոլորտը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերի համապատասխանեցում ներկա իրավիճակին, անկախ գիտական փորձագիտական համակարգի ներդրում	-	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2011-2012թթ.
1.2	Գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմների մշակում և ներդրում	Գիտական կազմակերպությունների պետական ֆինանսավորման ծավալների համապատասխանեցում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների արդյունավետությանը	-	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2011-2012թթ.
1.3	Գիտական հետազոտությունների և մշակումների ոլորտում	Գիտության ոլորտի գնահատման մեթոդների արդիականացում,	-	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության	2011-2012թթ.

1	2	3	4	5	6
	գործունեության գնահատման ժամանակակից վիճակագրական համակարգի մշակում և ներդրում	միջազգային չափանիշներին հետ համադրելի գնահատման համակարգի ներդրում		պետական կոմիտե, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	
1.4	Գիտական հետազոտությունների և մշակումների ոլորտի ֆինանսավորման ծավալների ավելացման մեխանիզմների մշակում և ներդրում	Գիտության ոլորտի ֆինանսավորման ծավալների ավելացում, գիտական հետազոտությունների և մշակումների բյուջեի կառուցվածքում տնտեսության մասնավոր հատվածի մասնաբաժնի զգալի ավելացում	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2011-2015թթ.
<b>2. Գիտության, կրթության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող երիտասարդ կադրերի թվաքանակի աճի ապահովում, գիտության ոլորտի ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի արդիականացում</b>					
2.1	Գիտական կադրերի պատրաստման պետական պատվերի ձևավորման մեխանիզմի մշակում, գիտական աստիճանաշնորհման ժամանակակից համակարգի ձևավորում և ներդրում	Գիտական կադրերի պատրաստման գիտականորեն հիմնավորված պետական պատվերի ձևավորում, միջազգային չափանիշներին համապատասխանող գիտական աստիճանաշնորհման համակարգի ներդրում	-	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2011-2015թթ.
2.2	Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման և հաստատման ծրագրի մշակում	Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ամրապնդում, ոլորտից կադրերի արտահոսքի նվազեցում	-	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2011-2012թթ.
2.3	ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների շրջանակներում երիտասարդ գիտնականների (մինչև 35	Երիտասարդ գիտնականների աշխատանքային և սոցիալական պայմանների բարելավում, գիտահետազոտական խմբերի,	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե	2011-2015թթ.



1	2		3	4	5	6
	տարեկան) համար ամենամյա դրամաշնորհային մրցույթների իրականացում		լաբորատորաների և այլ ստորաբաժանումների ղեկավարների պատրաստում			
2.4	Հետազոտական համալսարանի ստեղծման մեկ ծրագրի իրականացում	Կրթության և գիտության ինտեգրում, բարձրագույն մասնագիտական կրթության ժամանակակից եղանակների ներդրում	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2013-2015թթ.	
2.5	Գիտական աշխատողների նոր տարակարգերի և աշխատավարձերի սանդղակի սահմանում	Գիտական աշխատողների աշխատավարձերի համապատասխանեցում գիտական գործունեության արդյունավետությանը	-	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2011-2012թթ.	
2.6	Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտական աշխատողների խրախուսման ծրագրերի իրականացում	Գիտական աշխատողի սոցիալական պայմանների բարելավում, գիտնականի կարիերայի գրավչության բարձրացում	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2012-2015թթ.	
2.7	Գիտության ոլորտի ենթակառուցվածքների արդի վիճակի վերլուծություն, համապատասխան շտեմարանների ստեղծում	Գիտության ոլորտի ենթակառուցվածքների ներկա վիճակ գնահատում, հետազոտական սարքավորումների օգտագործման արդյունավետության բարձրացում	-	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե	2011-2012թթ.	
2.8	Համատեղ օգտագործման հետազոտական սարքավորումների ձեռքբերման ծրագրերի իրականացում	Գիտության ոլորտի ենթակառուցվածքների արդիականացում, հետազոտական սարքավորումների ձեռքբերմանն ուղղված ֆինանսական ծախսերի օպտիմալացում	ՀՀ պետական բյուջե արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե	2012-2015թթ.	
2.9	Ներհանրապետական միասնական	Գիտական հետազոտությունների և	ՀՀ պետական	ՀՀ կրթության և գիտության	2011-2015թթ.	

1	2		3	4	5	6
		գիտատեղեկատվական ցանցի ստեղծում, միջազգային գիտատեղեկատվական ցանցի ազատ օգտագործման պայմանների ապահովում	մշակումների ոլորտի ժամանակակից գիտատեղեկատվական հենքի ապահովում	բյուջե, արտաբյուջետային միջոցներ	Նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	
2.10		Հանրապետական գիտական ամսագրերի մասնագիտական մակարդակի բարձրացման ծրագրերի իրականացում, այդ թվում՝ ամսագրերի օտար լեզուներով հրատարակում	Միջազգային առաջատար գիտատեղեկատվական շտեմարաններում հանրապետական գիտական ամսագրերի ընդգրկում, հանրապետությունում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների վարկանիշի բարձրացում	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2011-2015թթ.
3.	Հիմնարար և կիրառական բնույթի՝ ներառյալ տնտեսության մեջ օգտագործվող գիտելիքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանում					
3.1		ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների շրջանակներում հիմնարար գիտական հետազոտությունների դրամաշնորհային ծրագրերի իրականացում	Հիմնարար գիտական հետազոտությունների պետական աջակցության ապահովում	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2011-2015թթ.
3.2		Գիտական հետազոտությունների և մշակումների բնագավառում հանրային-մասնավոր համագործակցության մեխանիզմների մշակում և ներդրում	Տնտեսության զարգացման պահանջներից բխող, հասցեագրված հետազոտությունների իրականացում,	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2011-2015թթ.
3.3		Կիրառական բնույթի ծրագրերի իրականացում, այդ թվում՝ տնտեսության մասնավոր հատվածի հետ համաֆինանսավորման սկզբունքով	Գիտական հետազոտությունների և մշակումների բնագավառում խնդիրների ձևակերպման և լուծման մեջ տնտեսության մասնավոր հատվածի ներգրավում	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2011-2015թթ.

1	2		3	4	5	6
	3.4	Բիզնես ինկուբատորների, տեխնոպարկերի ստեղծում	Ինքնօրինակ գիտատեխնիկական գաղափարներն իրագործող փոքր ինովացիոն ձեռնարկությունների ստեղծման և արդյունավետ գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծում	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2012-2015թթ.
	3.5	Տնտեսության մասնավոր հատվածում գիտական հետազոտությունների և մշակումների իրականացումը խրախուսող մեխանիզմների մշակում և ներդրում	Գիտական հետազոտությունների և մշակումների բնագավառում տնտեսության մասնավոր հատվածի մասնակցության համար նպաստավոր պայմանների ստեղծում	-	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2011-2012թթ.
	3.6	Գիտական արդյունքի առևտրայնացման աջակցության ծրագրերի իրականացում, այդ թվում՝ գիտաժողովների, գիտատար արտադրանքի ցուցահանդեսների կազմակերպում	Գիտատար արտադրանքի տարածում, դրանց նկատմամբ պահանջարկի առաջացմանն ուղղված միջոցառումների իրականացում	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2011-2015թթ.
<b>4.</b>	<b>Կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի ներդաշնակ համակարգի ձևավորման նախադրյալների ստեղծում</b>					
	4.1	Գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտում կառուցվածքային բարեփոխումների ծրագրի մշակում և իրականացում	Գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտի կառավարման ու աշխատանքների կազմակերպման ժամանակակից համակարգի ներդրում	-	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ճյուղային նախարարություններ՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2011-2013թթ.
	4.2	Գիտական կազմակերպությունների համար նպաստավոր տնտեսական միջավայրի ձևավորման մեխանիզմների մշակում և ներդրում	Գիտական արդյունքի ներդրման պայմանների ստեղծում, գիտատար արտադրանքի տարածում	-	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2012-2014թթ.
	4.3	Գիտաինովացիոն ենթակառուցվածքի ստեղծման ծրագրի մշակում և իրականացում	Գիտատար և նորարարական արտադրությունների աջակցման համար նպաստավոր պայմանների	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ էկոնոմիկայի	2012-2015թթ.

1	2		3	4	5	6
			ձևավորում	միջոցներ	Նախարարություն՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	
4.4	Գիտահետազոտական կազմակերպությունների մի մասի վերակազմակերպում ինովացիոնի	Գիտատար արտադրանքի և տեխնոլոգիաների փոխանցման կենտրոնների ձևավորում	-	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2012-2015թթ.	
4.5	Հանրային-մասնավոր համագործակցության շրջանակներում համատեղ գիտական, գիտակրթական կամ գիտաարտադրական կենտրոնների ստեղծում	Գիտության, կրթության և արտադրության ինտեգրում	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2012-2015թթ.	
<b>5.</b>	<b>Հայագիտության ոլորտի առաջնային զարգացում</b>					
5.1	Հայագիտության հայեցակարգի և հայագիտության ոլորտի զարգացման ռազմավարության մշակում և իրականացում	Հանրապետությունում իրականացվող հայագիտական աշխատանքների համակարգում, ոլորտի արդյունավետ և հեռանկարային զարգացման օրինաչափությունների նախանշում, առաջընթաց զարգացման ապահովում	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2011-2015թթ.	
<b>6.</b>	<b>Միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցության զարգացում</b>					
6.1	Հանրապետության գիտական և գիտատեխնիկական զարգացման հեռանկարների գնահատում և ճշգրտում	Հանրապետության տնտեսության զարգացման վրա մեծ ազդեցություն ունեցող գիտական և տեխնոլոգիական ուղղությունների որոշում	-	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ	2012-2013թթ.	

1	2		3	4	5	6
					(համաձայնությամբ)	
6.2	Միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցության պետական միասնական ծրագրի մշակում և իրականացում	Միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցության առաջնահերթությունների որոշում, համապատասխան ծրագրերի իրականացում	-	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2011-2015թթ.	
6.3	Համատեղ միջազգային գիտական, գիտակրթական կենտրոնների և լաբորատորիաների ստեղծում	Հանրապետությունում միջազգային չափանիշներին համապատասխանող գիտահետազոտական կառույցների ստեղծում	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2011-2015թթ.	
6.4	Միջազգային կամ օտարերկրյա պետությունների առաջատար կենտրոններում մասնագետների պատրաստման ծրագրերի իրականացում	Գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման արդի մեթոդների ներդրում, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների շարժունության ապահովում	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2012-2015թթ.	
6.5	Օտարերկրյա պետություններում աշխատող հայազգի գիտնականների հետ համագործակցության ծրագրերի իրականացում	Գիտական և գիտատեխնիկական ծրագրերի իրականացման մեջ օտարերկրյա պետություններում աշխատող հայազգի գիտնականների գիտելիքի, փորձի և հնարավորությունների օգտագործման հնարավորությունների ապահովում	ՀՀ պետական բյուջե, արտաբյուջետային միջոցներ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, ՀՀ սփյուռքի նախարարություն՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ (համաձայնությամբ)	2012-2015թթ.	